ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Հ Կ(Բ)Պ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՅԱԿ ՊԱՊՅԱՆԻՆ
ՀՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՂԱՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Արտագին ողջունում ենք Հայաստանում Սովետական իշխանության հաստատման քսանհինգերորդ տարեդարձը։ Քսանհինգ տարիների համառ և արդյունավետ աշխատանքով Սովետական Հայաստանի կառավարությունը ոչ միայն վերացրեց հայ ժողովրդի սրտին նստած վշտերն ու դառնությունները, այլև Հայաստանը դարձրեց լուսավոր, քաղաքակրթված, ծաղկուն մի երկիր։ Այդ են վկայում մեր բազմաթիվ գիտական հաստատությունները, ժողովրդական համատարած կրթությունը, արվեստների և գրականության աննախընթաց վերելքն ու ծաղկումը։ Այդ են վկայում մեր ծաղկած արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը և մեր համատարած շինարարությունը։ Հավատացած ենք, որ հետ այսու Հայաստանը սովետական իմաստուն կառավարության ղեկավարությամբ նորանոր հաղթանակներ կտանի հայ ժողովրդի զարգացման և առաջադիմության գործում։ Խորագույն կերպով հավատացած ենք նաև, որ ՍՍՌ Միության կառավարության և մեծ Ստալինի ջանքերով հայ ժողովուրդը իրականացած կտեսնի իր հայրենիքի ամբողջացումը և իր ժողովրդի համախմբումը Մայր Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում։

Այսօր, Սովետական Հայաստանի քսանհինգամյա փառապանծ տարեդարձի օրը, Հայ եկեղեցին, հոգևորականությունը և հավատացյալ ժողովուրդը ամենուրեք, ինչպես Մայր Հայրենիքում, Սովետական Միությունում, նույնպես և արտասահմանյան բոլոր եկեղեցիներում մատուցում է սուրբ պատարագ, կատարում հանրապետական մաղթանք և խնդրում Բարձրյալին իր ամենակարող Աջով հովանի և զորավիգ լինել հայ ժողովրդին և նրա հարազատ Սովետական կառավարությանը։

Հայ եկեղեցին իր ավանդական տրադիցիաներում պաշտպանել է և այսօր առավել ևս պաշտպանում է Հայ Հայրենիքի և Հայ պետականության միասնական և սուրբ գաղափարը։

Թող Ամենաբարձրյալի օրհնությունը լինի Ձեր և Ձեր ձեռնարկած գործերի վրա։

ԳԵՎՈՐԳ Զ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց